հա՛ն, մինչ[3] գիտես, եթէ[4] ծառայելոց ես Արեաց[5] արքայի, ընդէ՞ր յանդգնիս այդպէս[6]:
*48* Արդ՝ արի ե՛կ առ մեզ եւ լե՛ր հարկատու մեզ[7] եւ գնա՛[8], ապա թէ ոչ՝ մեռանիս իբրեւ[9]
զշուն»: *49* Եւ նորա լուեալ զայն՝[10] առեալ վեց հազար այր եւ գնաց ի վերայ նոցա ինքն
եւ որդին իւր Սմբատ[11]: *50* Իբրեւ[12] կացին հանդէպ իրերաց, սկսաւ Ասուր թշնամանել
զՎահան եւ Գայլ կոչէր նմա[13]: *51* Եւ[14] նա ասէ. «Յիրաւի է անունդ ինձ[15], քանզի գամ
կոտորեմ, երթամ[16] եւ այլ գամ»: *52* Եւ սկսան մարտնչել ընդ[17] միմեանս:

*53* Իբրեւ խմբեցաւ պատերազմն[18], ակն եդեալ[19] Սմբատ՝ որդին Վահանայ, Ասու-
րայ[20] եւ պատահեցաւ[21] նմա: *54* Իսկ Ասուր[22] տեսեալ, թէ[23] պատանի է, քամահեաց
զնա եւ ասէ. «Քարապաշտ հարճորդի՛, ի բաց կա՛ց, որ[24] ի պատերազմող արսն ան-
ցից[25]»: *55* Եւ[26] նա ասէ. «Որդի՛ սատանայի, յիրաւի է անուն քո Ասուր, զի սուր քո ոչ ինչ
է[27], եւ ի մարտնչել[28] ընդ մանկանս[29] ճանաչես[30] զպարտութիւն[31] քո»: *56* Եւ ածեալ
զսուրն՝[32] կտրեաց զգլուխ երիվարի նորա[33] եւ զնա յերկիր ընկէց[34]: *57* Եւ յարձակեալ՝
առ[35] զգլուխն ի նմանէ[1], եւ ասէ[2]. «Փա՛ռք քեզ, Քրիստո՛ս, եւ[3] սուրբ Կարապե՛տ, որով[4]
յաղթեցեր հակառակորդին[5]»:

---

1 *hmv* Մեղտայ, *so* Մեղեայ *փխ* գետոյն Մեղայ *(bn)*
2 *mo* առաքեցին, *h* առաքեաց *փխ* արձակեցին *(bsv)*
3 *b* ինչ *փխ* մինչ
4 *b* որ եթէ / *h չիք* եթէ
5 *b* արանց *փխ* Արեաց
6 *hmov* այդպէս յանդգնեալ անամաւթիս *փխ* յանդգնիս այդպէս *(bs)*
7 *s* մեր *փխ* մեզ *(b)*
8 *hmov չիք* մեզ եւ գնա
9 *sv* որպէս *փխ* իբրեւ
10 *hmo* զայս լուեալ *փխ* լուեալ զայն *(bsv)*
11 *hmo* զՍմբատ (*h* Սմբատ) զորդի իւր, եւ գնաց ի պատերազմ (*o* պատերազմն) *փխ* գնաց ի վերայ … Սմբատ *(1 տող)*
12 *lo չիք* Եւ իբրեւ
13 *hmo* կոչել *փխ* կոչէր նմա *(blsv)*
14 *hmov* Իսկ *փխ* Եւ *(bls)*
15 *hmo* այդ անուն իմ *փխ* անունդ ինձ *(blsv)*
16 *hmo* գնամ *փխ* երթամ *(blsv)*
17 *s* մարտնչիլ առ *փխ* մարտնչել ընդ
18 *hm* պատերազմ, *l* պատերազմնն *փխ* պատերազմն *(bnsov)*
19 *mo* կալաւ *փխ* եդեալ *(blsv)* / *h* անկեալ *փխ* ակն եդեալ
20 *hmov* ի վերայ Ասուրայ
21 *hmo* պատահեաց *փխ* պատահեցաւ *(blsv)*
22 *lo* Ասուրայ *փխ* Ասուր
23 *lmv* եթէ *փխ* թէ *(bhsv)*
24 *hmov* զի *փխ* որ *(bls)*
25 *o* անցանեմ, *hmv* ելանեմ անցանեմ *փխ* անցից *(bls)*
26 *hmo* Իսկ *փխ* Եւ *(blsv)*
27 *hmov* չէ ինչ *փխ* ոչ ինչ է *(bls)*
28 *s* մարտնչիլ / *hmo* մարտուցեալ *փխ* ի մարտնչել *(blsv)*
29 *v* մանկանն, *n* միմեանս, *o* կտրիճս, *hmv*[2] կտրճին *փխ* մանկանս *(bls)*
30 *hmov* ծանիցես *փխ* ճանաչես *(bls)*
31 *n* զիպարտութիւն *փխ* զպարտութիւն
32 *hmo* յանկարծակի (*o* յանկարծ) զէնս վերացուցեալ *փխ* ածեալ զսուրն *(blsv)*
33 *hmo* Ասուրայ *փխ* նորա *(blsv)*
34 *m* ընգեաց
35 *sv* էառ, *hmo* ի վերայ նորա (*o* նորայ), կտրեաց *փխ* առ *(bl)*